«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **<<ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ>> ԲԱՂԱԴՐԻՉԸ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ԱՌԱՐԿԱ **ՄԱՅՐԵՆԻ**

ՀԵՂԻՆԱԿ **Ռուզաննա Ռազմիկի Հակոբյան**

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ **Հնաբերդի Ե.Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն ----------3

Գլուխ 1:Շփում և հաղորդակցում.....6

1.1 Պատմել, հաղորդակցվել,ասել.....7

1.2 Ընտանեկան լուսանկար.....8

1.3 Քո տրամադրության ներկապնակը ---------- 9

1.4 Գողազդ և հայտարարություն.....11

Գլուխ 2: Հաղորդակցության տեսակները ---------- 11

2.1 Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում---------- 12

2.2 Բանավոր և գրավոր հաղորդակցում ---------- 13

2.3 Բարեկիրթ հաղորդակցություն.....15

2.4 Խոսքային հաղորդակցում:Բանավեճ ---------- 16

Եզրակացություն.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

Ն Ե Ր Ա Ծ Ռ Ի Թ Յ Ռ Ի Ն

Խոսքը լեզվի իրական վիճակն է, իրական գոյը:

Ղազարոս Աղայան

Գեղեցիկ ու գրագետ խոսքը մտքի կազմակերպվածության արտահայտությունն է, մարդիկ միմյանց հետ հաղորդակցվում են խոսքի միջոցով,որքան հարուստ է բառապաշարը այնքան գեղեցիկ ու գրավիչ է դառնում բանավոր խոսքը:Հայ նշանավոր գրող և մանկավարժ Ղազարոս Աղայանը խոսքի զարգացումը նմանեցնում է գոլորշու փոքրիկ ու աննշան շիթերից գոյացող մարգարտյա հատիկներին: Ըստ՝ նրա խոսքի զարգացումը ենթադրում է մտածողության հարստացում, իսկ բառապաշարի ճոխությունը՝գիտելիքների բազմազանություն:Կարևորելով խոսքի և հաղորդակցության դերը անձի ձևավորման գործում այս խնդրին անհրաժեշտ է լրջորեն վերաբերվել տարրական դպրոցում՝ հատկապես Մայրենիի դասավանդման դասաժամերի ընթացքում, ուսուցիչը պարտավոր է հետևողական լինի աշակերտի բանավոր խոսքի նկատմամբ, կարողանա ուղղորդել, զարգացնել բարեկիրթ ու գրագետ հաղորդակցա-կան կարողություններ ու հմտություններ:Հանրակրթության մեջ ուսուցման տարրական փուլն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից ամենակարևորը նոր ձևավորվող սանի համար ուսուցչի՝ տվյալ դեպքում դասվարի հեղինակության ու դերի արժևորումն է, նրան որպես ղեկավար առաջնոդ ընդունելն է: Այս իսկ պատճառով դասվարի անմիջական ազեցության աստիճանի բարձր լինելու պարագայում՝ առաջնային է դառնում դասվարի կողմից իր սանին ճանաչելը, նրա ընդունակությունների գնահատումը, նրա խոսքն ու հաղորդակցության ուղղորդելը, կարգավորելը, բանավոր խոսքի զարգացնելը:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում շատ հաճախ եմ հանդիպել այնպիսի իրավիճակների,երբ սովորողների մոտ հաղորդակցական խոսքը կազմակերպելիս առաջանում են մի շարք խնդիրներ ,հաղորդակցությունը վատ կամ շատ վատ է կազմակերպվում, խոսքի մեջ օգտագործվում են օտարածին

բառեր, ոչ ճիշտ արտահայտություններ: Ունենք մի այնպիսի իրավիճակ, երբ սովորողը միայն դասագրքի սահմաններում է փորձում խոսել արտահայտվել մաքուր գրական հայերենով, իսկ դասագրքի սահմաններից դուրս իր տեսածը,լսածը կամ որև իրավիճակ վերապատմելիս կամ դրա մասին իր կարծիքը շարադրելիս խոսում է ոչ մաքուր հայերենով: Կարծում եմ ապագա սերունդի կրթության ու դաստիարակության դժվարին ու բարդ աշատանքի մեջ շատ կարևոր է դասվարի դերն ու նրա կողմից կատարվող աշխատանքը , որը միտված կլինի սովորողների հաղոդակցական խոսքի ճիշտ ձևավորմանը,կնպաստի բարեկիրթ խոսք և հաղորդակցության զարգացմանը ու կատարելագործմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել <<Խոսք և հաղորդակցություն>> բաղադրիչի դերն ու տեղը մայրենիի դասավանդման ընթացքում:Ակնկալվում է, որ հետևողական ու նպատակասլաց ջանքերի արդյունքում տարրական դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա.

1. Հայերենով հաղորդակցվել հասակակիցների,իրենից մեծերի և փոքրերի հետ,ընկալել ուրիշների խոսքը և կարողանալ արտահայտել սեփական մտքերը:
2. Կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր, գրավոր շարադրել դրանց բովանդակությունը:
3. Սովորել և սովորեցնել, տիրապետել սովորելու հիմնական հմտություններին:
4. Կարողանալ ճիշտ գնահատել իր հնարավորությունները, կարողանալ աշխատել համագործակցված, լինել առաջնորդ:
5. Իմանալ իր իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատու լինել իր արարքների համար:
6. Արժևորել իր ազգային ինքնությունը, դրսևորել հանդուրժողականություն և զուսպ վարք:

Հաղորդակցական կարողությունների և հմտությունների ձևավորման արդյունքում իմ հետազոտական աշխատանքի նպատակն է՝ խթանել ճիշտ խոսքի կառուցմանը, զարգացնել սովորողների հաղորդակցական

կարողություններն ու հմտությունները,հասնել տարրական կրթության չափորոշչային այն մակարդակին,որը ապահովում է սովորողի հետևյալ կարողությունները.

ա/հասկանալ ուրիշների տեսակետը և դիրքորոշումը

բ/համագործակցելիս հաշվի առնել տարբեր տեսակետները

գ/համարժեք օգտագործել խոսքային միջոցները,տարբեր հաղորդակցային խնդիրներ լուծելու համար

դ/զրուցակցին անհրաժեշտ տեղեկատվությունը կարողանա հաղորդել ճշգրիտ և լիարժեք

ե/բառապաշարի պարբերաբար հարստացում և լեզվական գիտելիքների խորացում

զ/ իր խոսքը կառուցել պարզ, մաքուր գրական հայերենով

Սա միանգամայն հիմնավորվում է այն հանգամանքով, որ առարկայական ծրագրերում առկա են հետևյալ բաղադրիչները՝ <<Խոսքային հաղորդակցություն>> և <<Կապակցված խոսք>>, որոնք կոչված են վերոնշյալ նպատակին:

<<Խոսքային հաղորդակցություն>> ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների /գրել,կարդալ,լսել,խոսել/ ուղղությամբ կազմակերպված համագործակցված և նպատակային աշխատանքն է:Խոսքի զարգացման ուղղությամբ մինչև այժմ կատարած աշխատանքներում բառապաշարի հարստացման,աշակերտի խոսքի՝ լեզվաքերականական կառուցվածքի մշակման զուգահեռ հաճախ հաշվի չենք առնում կյանքի տարբեր իրավիճակներում աշակերտների բարեկիրթ խոսքի մշակույթի ձևավորման խնդիրները:Նմանատիպ աշխատանքները պետք է հետևողականորեն և նպատակային ձևավորեն <<խոսքային>> դասերի ընթացքում: Այդ ժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառույթային մոտեցմանը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը: Ուսումնական բոլոր առարկաներն էլ իրենց ներդրումն ունեն սովորողների լեզվական

իրազեկությունների զարգացման գործում,քանի որ բոլորն էլ կրթության լեզուն օգտագործում են գրտելիքները յուրացնելու և ներկայացնելու համար։Մայրենիի ուսուցման խնդիրներ, որոնք առնչվում են <<Խոսք հաղորդակցություն>> դասաժամերի հետ։

- Բառապաշարի հարստացում և խոսքի քերականական կառուցվածքի մշակում խոսքային իրավիճակներին համապատասխան ճիշտ, արտահայտիչ, լեզվական միջոցների ընտրության պատճառով։
- Լեզվական կանոնների ուսուցում և դրանց գործածությունը՝ կախված իմաստից, ոճից և

իրավիճակից։

- Ճիշտ խոսքի հիմնական հատկանիշների մշակում։

Նա ով մտածում է, նա պարզ արտահայտվում է։

Խոսքի զարգացումն ուղղակիորեն կապված է մտածողության զարգացման հետ։Անհրաժեշտ է, որ ուսուցիչն անընդհատ ուշադրության կենտրոնում պահի երեխայի հաղորդակցման կուլտուրայի ձևավորման հարցը։

Գլուխ 1։ ՇՓՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Հաղորդակցությունը, շփումը մարդկանց փոխազդեցության ձև է,որի արդյունքում՝

ա/ մարդիկ որոշակի տեղեկատվություն են փոխանակում,ճանաչելով շրջապատող աշխարհը,մարդկանց,այդ թվում նաև ինքն իրեն /տեղեկատվական,հաղորդակցա-կան գործառույթ/։

բ/ պլանավորում և կազմակերպում են գործունեությունը՝ կարգավորելով սեփական և ընկերոջ վարքը /հողորդակցական-կարգավորող գործառույթ/

գ/ ազդում, ներգործում են շփվողների հուզական-զգայական ոլորտի վրա՝ կիրառելով աֆեկտիվ-հաղորդակցական գործառույթը։

Տարրական դասարանների դասագրքերում բավականին նյութեր կան երեխային բացատրելու մարդկային շփման կարևորության մասին, սակայն պետք է հիշեցնել, որ մարդը մենակ ապրել չի կարող, որ մարդիկ շփ վում են որպեսզի

- Ինչ-որ բան հարցնեն, տեղեկանան
- Բացատրեն կամ պարզաբանեն
- Օգնություն առաջարկեն կամ օգնություն խնդրեն
- Պարծենան, գլուխ գովեն

.Հանգստացնեն, մխիթարեն և այլն

Երեխան պետք է հիշի,որ շփումն ու հաղորդակցությունը հմտություններ են պահանջում:Նա պետք է իր խոսքը հաղորդակցական իրադրություններում հնարավորինս շատ օգտագործի դասարանում,ոչ միայն դասերը լավ պատրաստելու և գնահատվելու նկատառումով, այլ նաև

- Խորհուրդ տալ կամ խորհուրդ հարցնել
- Ուրախությունը կամ տխրությունը կիսել
- Պատմելու, ասելու, հաղորդելու
- համոզելու, ազդելու կամ ներգործելու

§ **1.1** ՊԱՏՄԵԼ , ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ, ԱՍԵԼ

Այս տարիքում պայմանավորված երեխայի մտածողության գործնականությամբ և պատկերայնությամբ , նրա բանավոր խոսքը կարիք ունի հենակետերի ի դեմս գծապատկերների, նկարների,նախապես կարդացած պատմությունների կամ որոշակի բառապաշարի: Առաջին դասարանում նախաայբբենական շրջանի էջերի նկարների շուրջ պատմությունները , որոնք օգնում են զարգացնել աշակերտների բանավոր հաղորդակցական կարողությունները, մեկ- երկու պատմությունից հետո սյուժեները կրկնվելու արդյունքում նվազում են աշակերտների հետաքրքրությունն ու ուսումնական դրդապատճառները: Որպեսզի լուծվի այս խնդիրը անհրաժեշտ է երեխայի կենսափորձը բերել դպրոց:Բերենք նաև ուսումնական գործունեության օրինակ՝

§1.2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ

1-ին դասարան

Առաջարկում եմ այդ սահմանափակությունները հաղթահարելու նպատակով դպրոց բերել ընտանեկան լուսանկարներ, որոնք պատկերում են

- Ընտանեկան տոնախմբություն
- Ծննդյան տոնի մի դրվագ
- Հանգստի դրվագները

Ուսուցիչը պետք է օգնի երեխաներին , որ այդ լուսանկարներից ընտրեն

ամենահետաքրքիրները :Ապա պատրաստեն ինքնաշեն շրջանակներ և տեղավորեն շրջանակների մեջ և փակցնեն դասարանում առանձին տեղ, որ բոլորը կարողանան ուսումնասիրել միմյանց ընտանեկան լուսանկարները:

Լուսանկարները փակցնել պատին, համեմատել այբբենարանի նկարների հետ:Գտնել համադրություններ և հակադրություններ,ինչի շնորհիվ կզարգանա աշակերտների երևակայությունը և ինքնուրույն բանավոր խոսքի կառուցան հնարավորությունը:Աշակերտներին հնարավորություն տալ ներկայացնելու իրենց ընտանեկան լուսանկարների պատմությունները:

2-4-րդ դասարաններ

Այս տարիքային խմբում կարելի է գրել փոքրիկ պատմություններ նկարների շուրջ,որոնք հետաքրքիր դարձնելու նպատակով առաջադրել լրացուցիչ հարցեր կամ առաջադրանքներ՝ պատմությունն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով; Օրինակ՝

- Գրի՛ր և պատմի՛ր այն մասին, ինչ տեսնում ես նկարում
- Գրի՛ր և պատմի՛ր այն մասին, ինչը չի երևում նկարում,բայց այդ օրը եղել է
- Նկարին առնչվող մի քանի երկխոսություն գրի՛ր

Այս աշխատանքը նպաստում է երեխայի գրավոր խոսքի զարգացմանը:
1-ին դասարան /բանավոր հաղորդակցման կարողություն/ - Արդյունավետ կլինի

նաև նմանատիպ մեկ այլ առաջադրանքի կատարումը: Առաջարկում եմ հանձնարարել երեխաներին ամեն օր դպրոց գալիս, կամ դպրոցից տուն գնալիս ուշադիր հետևել շրջապատին ,գտնեն հետաքրքրիր, տպավորիչ սյուժեներ, դեպքեր, որոնց մասին պետք է պատմեն դասարանում : Առաջին դասարանում մայրենիի դասաժամի սկզբին պատմեն <<օրվա լուրերի մասին>>: Բոլորը պետք է հանդես գան որպես <<լրատու>>:

2-4-րդ դասարաններում պետք է շեշտը դնել գրավոր հաղորդակցման կարողությունների զարգացման վրա: Առաջարկել երեխաներին գրավոր ներկայացնել իրենց նորություններն ու լուրերը: Յուրաքանչյուր օրվա համար ընտրում ենք մի քանի <<հերթապահ լրագրողներ>>,ովքեր ողջ շաբաթվա դիտարկումների արդյունքում ընտրում են ամենա… լուրը:Ամեն օր ընթերցված լուրերը փակցնում են <<Նորությունների պատ>>-ին:Իսկ շաբաթվա վերջում << Խոսք և հաղորդակցություն>> դասաժամին դասարանի քվեարկությամբ ընտրում են լավագույն լուրերից <u>ամենա…</u>մի քանի անվանակարգերով Պատասխանները կլինեն իրարից տարբերվող: Այս քվեարկումները հետաքրքրություն կառաջացնեն երեխաների մեջ: Պայմանը չի կարելի խախտել,բոլորը մեկ անգամ պետք է հանդես գան, որպես <<հերթապահ լրագրող>>: Օրինակ՝

<u>ամենածիծաղելի</u>	<u>ամենատխուր</u>	<u>ամենահետաքրքիր</u>	<u>ամենահուզիչ</u>

Իսկ լավագույն նյութերի հիման վրա կարող ենք հրատարակել դասարանական շաբաթաթերթ: Նմանատիպ աշխատանքները հետքրքրություն կառաջացնեն աշակերտների մեջ և կնպաստեն բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը:

§ 1.3 Քո տրամադրության ներկապնակը

Սեփական տրամադրությունը ճանաչելը , դրա մասին խոսելը, լավ կամ վատ տրամադրության պատճառները հասկանալը, վերլուծելը կօգնեն երեխաներին

ավելի ուշադիր ու նրբանկատ դառնալ հաղորդակցվողի տրամադրության նկատմամբ: Այս դեպքում հաղորդակցությունը կդառնա ավելի արդյունավետ, իսկ հաղորդակցվողները ավելի նրբանկատկլինեն միմյանց նկատմամբ: Շատ տեղին կլինի, որ ուսուցիչը դասի ընթացքում հարցեր առաջադրի.

- ✓ Ի՞նչն է քեզ ուրախացնում
- ✓ Ի՞նչ ես անում, երբ տրամադրություն չես ունենում
- ✓ Կարողանո՞ւմ ես փոխել ուրիշների տրամադրությունը
- ✓ Ի՞նչ ես անում, երբ բարձր է տրամադրությունդ

Կարելի է առաջարկել երեխաներին ամեն օր գնահատել դասարանի տրամադրությունը: Աշակերտները նկարում են հնգաթերթ ծաղիկ և յուրաքնչյուր թերթիկի վրա գրում են շաբաթվա աշխատանքային օրերը: Եվ դասարանի յուրաքանչյուր օրվա տրամադրությանը համապատասխան ընտրում են գույն:





Շաբաթվա վերջին՝ խոսք և հաղորդակցություն դասի ժամին պարզվում է դասարանի տրամադրությունը և փնտրել ելքեր՝ այն ավելի ուրախ ու երջանիկ դարձնելու համար: Հարց. Կուզեի՞ք, որ շաբաթվա բոլոր օրերը գունավորեիք կարմիր կամ կանաչ:Պատասխանները կլինեն բազմազան:Նույնը կարելի է հանձնարարել կատարել տանը՝ տան անդամների տրամադրությունը որոշելու համար:

§ 1.4 ԳՈՎԱԶԴ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՌԻԹՅՈՒՆ

Գովազդն ու հայտարարությունը ևս հաղորդակցման մի ձև են , որտեղ պետք է հետաքրքիր ու գրավիչ ներկայացվի գողազդվող առարկայի հատկանիշները; 1.Երբ գովազդվում է որևէ մթերք կամ իր, ասում են նրա լավ հատկանիշները, որպեսզի մարդիկ գնեն այն; 2. Հայտարարություններում մարդիկ կամ կազմակերպությունները հայտնում են այն մասին, թե ինչ են առաջարկում, ինչ են գտել կամ կորցրել, ինչ են ուզում վաճառել կամ գնել; Ներկայացված օրինակները կօգնեն երեխաներին ինքնուրույն օգտվել այդ ձևերից անհրաժեշտության պարագայում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի դեկտեմբերի 25-ին,ժամը 11:00-ին 1-ին դասարանում տեղի կունենա ցերեկույթ՝ <<ԳԱԼԴ ԲԱՐԻ ՆՈՐ ՏԱՐԻ >> խորագրով:Սիրով հրավիրում ենք բոլորին

ԳՈՎԱԶԴ

Պատրաստում ենք գեղեցիկ պաստառներ և պատի թերթեր /միայն ձեռքի աշխատանք/: Ցանկացողները դիմեն 123456789 հեռախոսահամարով:

Փ Ն Տ Ր ՈՒ Մ ԵՄ

Փնտրում եմ շնիկիս: Վերջին անգամ տեսել եմ դպրոցի բակում: Տեսնողները կամ գտնողները թող զանգահարեն 12345678 հեռախոսահամարով:

Լուսանկար

Նմանատիպ օրինակները կօգնեն երեխաներին ինքնուրույն օգտվել անհրաժեշտության դեպքում:

ԳԼՈՒԽ 2: ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Շփման ու հաղորդակցության համար մարդիկ ընտրում են տարբեր ձևեր ու միջոցներ՝ ելնելով հաղորդակցման նպատակներից,տեղից, ժամանակից ու հասցեատիրոջից:

Շփումն ու հաղորդակցումը կարող են լինել՝

- Խոսքային և ոչ խոսքային
- Բանավոր կամ գրավոր

- Միջանձնային կամ զանգվածային
- Մտերմիկ,գործնական կամ պաշտոնական

§ 2.1 Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցում

Որպեսզի երեխաներին ցույց տանք, որ մտքերը, ասելիքը, հույզերը, զգացմունքները կարելի է հաղորդել ոչ միայն բառերով, այլև առանց բառերի՝ առաջարկենք առաջադրանքներ։ <<Ինչպե՞ս կարելի է ճանաչել տրամադրությունը>> : Երեխաներին առաջարկում ենք մտածել այն մասին, թե ինչպես կարող են հասկանալ շրջապատող մարդկանց /մայրիկի,տատիկի,քույրիկի,ուսուցչի/ տրամադրությունը։ Օրինակ՝ Ինչի՞ց և ինչպե՞ս ես հասկանում , որ մայրիկն ուրախ է։

- Երբ մայրիկը երգելով է ճաշ պատրաստում խոհանոցում, ուրեմն ուրախ է։

Կարելի է տալ այսպիսի հարց. Դու կարո՞ղ ես փոխել մարդկանց տրամադրությունները։ Երեխան պետք է նկարի տրամադրություններ և նշի յուրաքանչյուրի տակ թե ի՞նչ տրամադրություն է նկարել.

ուրախ տխուր զարմացած

Դասի պլան

Առարկան ՝ Մայրենի /խոսք և հաղորդակցություն/

Դասարանը՝ 3-րդ

Թեման՝ Զգացմունքներ

Չափորոշչային պահանջը՝ զգացողությունների բնութագրում,տարբերակում

Դասի նպատակը՝ զգացմունքների ճանաչում խոսքային և ոչ խոսքային ձևերով

Դասի խնդիրները՝ աշակերտները

- կներկայացնեն իրենց տրամադրությունները բառերով
- կկարողանան համապատասխանեցնել նկարներն ու բառերը

- կստեղծեն <<Տրամադրության գորգ>> պաստառը

Անհրաժեշտ նյութեր.- գունավոր կպչուն թղթեր, բառաքարտեր,տարբեր տրամադրություն արտահայտող նկարներ

Դասի ընթացքը՝ խթանման փուլ

Հարցադրում Ի՞նչ տրամադրություն ունեք։Գրեք սոսնձաթղթին բառերով կամ պատկերի խորհրդանշանով և փակցրեք <<Տրամադրության գորգ>> պաստառին /5ր/.

Իմաստի ընկալման փուլ՝

1Հարցադրումներ

- Ի՞նչ եք անում երբ ուրախ եք
- Ինչը՞ կարող է ձեզ ուրախացնել
- Ի՞նչ եք անում երբ տխուր եք
- Ինչը՞ կարող է ձեզ տխրեցնել
- Ինչպե՞ս կարելի է հասկանալ մարդու տրամադրությունը
- Ինչպե՞ս փոխել տրամադրությունը

2. Դասարանը բաժանել խմբերի /գույներով/ և յուրաքանչյուր խմբին տալ տրամադրություն արտահայտող նկարներ և բառաքարտեր: Աշխատանքը հետևյալն է.

3. Համապատասխանեցնել բառերն ու տրամադրություն արտահայտող նկարները:

4. խմբերն հերթով պաստառի վրա դասավորում են նկարները ըստ տրամադրության՝ վատ տրամադրությունից դեպի լավը:

5. ընտրում են ամենաբնորոշ բառը և տեղադրում նկարի տակ:

Կշռադատման փուլ- անդրադարձ խթանման փուլին /տրամադրության գորգում գրառված սեփական բառը համապատասխանացնել տրամադրությունաչափին/

Ամփոփում, գնահատում:

Կարելի է գնահատել նաև դասարանի տրամադրությունը:

§2.2 Բանավոր և գրավոր հաղորդակցում

Խոսքային հաղորդակցության մյուս տեսակը բանավոր և գրավոր հաղորդակցությունն է: 2-3-րդ դասարաններում կարելի է կիրառել օրինակ <<Հաղորդակցում տարածության մեջ>> թեմայով հետևյալ առաջադրանքը.

- Երեխանե՛ր պատկերացրեք մի իրավիճակ,որտեղ ծնողները տանը չեն,իսկ դուք պետք է տանից դուրս գաք:Ինչպե՞ս տեղյակ կպահեք ծնողներին այդ մասին
    - Զանգահարել և հայտնել հեռախոսով /բանավոր/
    - Հաղորդագրություն ուղարկել բջջային հեռախոսին /գրավոր/
    - Գրություն թողնել սեղանին /գրավոր/

Մարդիկ շփվում են միմյանց հետ տարբեր նպատակերով: Օրինակ՝

- Խնդրել
- Շնորհակալություն հայտնել
- Հանգստացնել
- Շնորհավորել
- Համոզել և այլն:

Օրինակ՝ աշակերտին կառաջարկեմ տարբեր հաղորդակցական իրավիճակներ՝ հանձնարարելով կառուցել խոսք՝ իրավիճակին համապատասխան բառեր: Ժամանակ եմ տրամադրում պատրաստվելու, որից հետո իրենց խոսքը պետք է ներկայացնեն ընկերոջը,ով էլ որ իր հերթին կգնահատի այդ խոսքը:Օրինակ՝

- Այսօր քո ամենամոտ ընկերը հիվանդացել է:Մխիթարի՛ր նրան:
- Այսօր ընկերուհուդ ծննդյան օրն է:Շնորհավորի՛ր նրան:
- Դու ուզում ես որ ընկերդ գա քեզ հետ խաղալու, իսկ նա չի ցանկանում:Համոզի՛ր նրան:
- Դասդ չես սովորել:Ուսուցիչն հարցնում է պատճառը:Արդարացի՛ր:

Հաղորդակցական կարողությունների զարգացման տեսանկյունից շատ կարևոր է ունկնդրելու կարողությունը:Երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել արձագանքել զրուցակցի խոսքերին, իր խոսքը կառուցել նրա ասածի հիման վրա և դառնալ ակտիվ ունկնդիր:

Ունկնդրումը ենթադրում է մի շարք հիմնական կարողություններ՝

- Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի բովանդակությունը
- Դուրս բերել իրեն անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկությունը
- Հասկանալ և ըմբռնել բովանդակության մանրամասները:

Որպես օրինակ կարելի է առաջարկել անավարտ նախադասություններ հաղորդակցվող կողնժմերի մասին և առաջարկել երեխաներին ավարտել այն:

Օրինակ՝ Ճառ ասեմ, թե … …:

Մենք … … , դուք լսում եք:

Սովորեցնել հասկանալ ունկնդրած տեքստը՝ ո՞րն է ամենակարևորը

Երբ ուշադիր լսում ես շատ կարևոր է, որ հասկանաս թե ու՞մ կամ ինչի՞ մասին է, ի՞նչ են կոնկրետ ասում, ո՞րն է ամենակարևորը: Օրինակ՝ երեխաների համար կարելի է կարդալ Աթաբեկ Խնկոյանի <<Ճպուռն ու մրջյունը>> առակը: Առաջարկել պատասխանել հետևյալ հարցերին գրավոր կամ բանավոր:



2.3 Բարեկիրթ հաղորդակցություն

Բարեկիրթ շփման,հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորելն անշուշտ մի քանի դասով տեղի չի ունենում: Այն կրում է շարունակական բնույթ:Այսպիսով շփման կարողությունների ձևավորումը և զարգացումը տարրական դասարաններում ենթադրում է մի քանի խնդիրների լուծում:

ա/ տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը

բ/ իմանալ բարեկիրթ բառեր, բառակապակցություններ

գ/ կարողանալ դրանք կիրառել խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան:

Ընթերցում եմ Դոնալդ Բիսեթի <<Շնորհակալությունը, Ներեցեքը, Խնդրեմը>> հեքիաթը:Առաջադրված հարցերի միջոցով կպարզաբանենք, թե որ իրավիճակում, ինչպես պետք է կիրառել այդ բառերը:Նմանատիպ աշխատանքների իրականացումն ու կիրառումը կախված են ուսուցչի հմտությունից,

աշակերտների ուշադրությունից և ցանկություններից: 3-4-րդ դասարաններում կարելի է առաջադրանքը բարդացնել՝ առաջարկելով հիշել իրենց անցած պատմություններում, հեքիաթներում հանդիպած օրինակ՝ ողջույնի այլ տարբերակներ: Օրինակ՝ Բարի աջողում ուստա փիսո: /Շունն ու կատուն/

Բարև, մարդ աստծո: /Անխելք մարդը/: Կատարել համեմատություն բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքի միջև: Բարեկիրթ մարդը չի վիրավորում , չի նեղացնում և չի կոպտում ոչ մեկին: Նա խոսում է մեղմ,հանգիստ ձայնով: Ուսուցչի դեպքում բարեկրթությունը դիմացինին լսել կարողանալն է, չընդհատելը,խոսքի մեջ չընկնելը:

2.4 Խոսքային հաղորդակցում: Բանավեճ

Հաղորդակցման այս ձևը հնարավորություն է տալիս ազատ,անկաշկանդ բանավիճել արևէ խնդրահարույց հարցի շուրջ: Այն որպես հաղորդակցման ձև ունի բազմաթիվ հնարավորություններ՝ կառուցել ինքնուրույն բանավոր խոսք, կարողանալ ինքնադրսևորում ցուցաբերել, լսել, քննարկել իր իսկ խոսքը, արտահայտվել տրված թեմայի շրջանակներում: Որպես բանավեճի թեմա ընտրեցի այնպիսին, որի միջոցով հնարավոր լինի զարգացնել աշակերտների ազատ մտքի արտահայտումը: Աշակերտներին տրված յուրաքնչյուր հանձնարարություն պետք է լինի՝

- Հետաքրքիր
- Համապատասխանի տարիքային առանձնահատկություններին՝ ելնելով չափորոշչային պահանջներից
- Յուրաքանչյուրին՝ ըստ ընդունակությունների ու կարողությունների

Որպես բանավեճի թեմա կարելի է վերցնել <<Գիտելիքը>> թեման: Աշխատանքն ունի հետազոտական բնույթ և այդ պատճառով էլ 4-րդ դասարանի աշակերտներին յուրաքանչյուրին տրվեց հանձնարարություն ըստ մակարդակի:

Ա մակարդակ – Գրել թևավոր խոսքեր և ասույթներ գիտելիքի մասին՝ օգտվելով գրքերից և համացանցից:

Բ մակարդակ – Գրել բանաստեղծություն գիտելիքի մասին

Գ- մակարդակ –Գրել շարադրություն գիտելիքի մասին

Դ-մակարդակ- Գրել ակրոստիքոս գիտելիքի մասին

Հետազոտական բնույթի այս աշխատանքը պլանավորել եմ,կազմակերպել և անցկացրել եմ <<Խոսք և հաղորդակցություն>> բաղադրիչի երկու հաջորդական դասաժամերին:

1-ին դասաժամ –նպատակը՝ 1. Կարողանալ լսել և գնահատել նախապես հանձնարարված աշխատանքները /Ա-Դ մակարդակներում/:

2. կարողանալ առանձնացնել ընտրված լավագույն մտքերն ու ասույթները:

3. կարողանալ գնահատել յուրաքնչյուրի ինքնուրույն խոսքը/Գ-Դ մակարդակներ/

Ընթացքը

1-ին դասաժամի ընթացքում կատարվեց լավագույն հինգ մտքերի և ասույթների ընտրությունը.

1. Չկա ավելի հզոր ուժ, քան գիտելիքն է:
2. Գիտելիքով զինված մարդն անպարտելի է:
3. Գիտելիքը զրահ է բոլոր դժբախտությունների դեմ:
4. Մարդ որքան շատ է իմանում, այնքան ավելի ուժեղ է:
5. Գիտելիքը գանձ է,բայց նրա բանալին պրակտիկան է:

Լսվեցին նաև բանաստեղծություններ, առանձնացվեց մեկ շարադրություն՝ <<Գիտելիքը գանձ է>> վերնագրով: Շարադրությունը հետաքրքիր մտքերի արտահայտություն էր, որում գիտելիքը համեմատվում էր գանձի հետ և դառնում հաղթող, քանի որ այն մեր մեջ է և միայն մերն է:

2-րդ դասաժամին որպես բանավեճի աֆորիզմ ընտրվեց <<Չկա ավելի մեծ ուժ քան գիտելիքն է, գիտելիքով զինված մարդն անպարտելի է>>:

Որպես թեմա ընտրվեց <<Երեք հարուստ>> հեքիաթը:Հեքիաթը երեխաներին ծանոթ է 2-րդ դասարանից: Հեքիաթի վերլուծությունը այս անգամ կատարվեց ըստ նշված աֆորիզմի: Այս միտքն ասոցացվեց հեքիաթի հետևյալ մտքի հետ՝ <<Այս գիտուն մարդը ձեր երկուսից ավելի հարուստ է, նրա հարստությունը ոչ կարող եք տեսնել, ոչ էլ կարող եք խլել,-ասում է Խիկար իմաստունը>>:

Ճիշտ է մարդ գիտելիք կարող է ձեռք բերել ավելի խելացի մարդու հոտ շփվելով, հաղորդակցվելով և լսելով,սակայն գիտելիքի հիմնական աղբյուրը գիրքն է:Այն մարդուն դարձնում է ուժեղ, բանիմաց, խելացի: Մարդիկ գրքերի շնորհիվ դաստիարակվում են ազնվությամբ, բարությամբ, հոգատարությամբ և

հայրենասիրությամբ: Եվ վերջապես յուրաքանչյուրիս ձեռք բերած գիտելիքը գանձ է, որն առանց պրակտիկայի թերևս ոչինչ է:

Բազմաթիվ քննարկումներ լսելուց ու մեկնաբանելուց հետո մեկ անգամ ևս ընդգծվեց, որ

<<Մարդը որքան ավելի շատ է իմանում,այնքան ավելի ուժեղ է>>

Մաքսիմ Գորկի

Սիրելի փոքրի՛կ հնարավորինս դու էլ զինվիր գիտելիքների պաշարով, որպեսզի կարողանաս հաղթահարել կյանքում հանդիպած դժվարությունները:Կյանքում եղիր գրքի նաբաժան ուղեկիցն ու անդավաճան ընկերը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Եթե ուսուցիչն իր մեջ զուգակցում է սերը գործի ու աշակերտների նկատմամբ, նա կատարյալ ուսուցիչ է:

Լև Տոլստոյ

<<Խոսք և հաղորդակցություն>> առարկայի դասաժամերի ներկայացված առաջադրանքների և հանձնարարությունների կատարումը կնպաստի աշակերտների բանավոր, գրավոր խոսքի զարգացմանը, վերարտադրողական,ստեղծագործական, բարեկիրթ խոսքի կարողությունների և հմտությունների զարգացմանը: Գիտելիքների յուրացման ընթացքն առավել արդյունավետ է,եթե ուսուցիչն ազատորեն է ընտրում սեփական նպատակները և դրանք իրագործելու ռազմավարությունը: Ժամանակակից ուսուցիչը պարտավոր է կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնց արդյունավետությունն արդեն իսկ հաստատվել է գործնականում:

Այս բաղադրիչի դասաժամերի ընթացքում աշակերտն ավելի ազատ է իր մտքերն ինքնուրույն արտահայտելու, երևակայական և ազատ, անկաշկանդ խոսքի կառուցման և արտահայտման տեսանկյունից: Իմ կարծիքով շաբաթական մեկ դասաժամը բավարար չէ այս կարողություններն ու հմտությունները լիարժեք ձևավորելու համար:

Ուսուցչի հարստությունն աշակերտներին տված նրա գիտությունն է:

Դիոգենես

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ.Թորոսյան, Գ.Թերզյան, Հ.Խաչատրյան << Խոսք և հաղորդակցություն>>
2. Նախաշավիղ,2006թ
3. Նախաշավիղ, 2012թ
4. Նախաշավիղ, 2016թ
5. Մանկավարժություն, 2011թ
6. Հանրագիտարան